

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան
վեցսուսուկ
2.60 տր.
Վեցսուսուկ
1.50 »

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Վեցսուսուկ 1.50 »

ԿԱՆԽԻԿ



ԲԱՐՆԱ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅՏԻ

Rédaction

„Iravo“

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրությունքի հս
չեմ տրմիս

ԱՌԱՋԱՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը՝ որուն ուղղակի հակոդութեան տակ կը գտնուին Պուլ-կարիոյ և Ռուսմանիոյ Հայոց կրօնական հաս-տատութիւնները ու գործերը, ամիսներէ ի վեր կը զբաղի այս երկու վիճակներուն մէջ առաջնորդութիւններ հաստատելու խնդրով: Պատրիարքարանի յիշօրէն ձեռք առած այս խնդրոյն կարգադրութիւնը կ'որոշուած էր աւել իր գծուար կողմերը ունի: Եւ այս դժուարութեանց պատճառաւ է որ ամիսներէ ի վեր դեռ կարելի չէ եղած վերջնական կարգադ-րութիւն մը ընել: Նախ Պուլկար և Ռուսմանի կառավարութեանց պաշտօնապէս հայ առաջ-նորդութիւններ ճանչցնել կամ ընդունել տա-լու գործը պաշտօնական ահագին ձեւակերպութիւններէ կը կարօտի, եթէ այդ կա-ռավարութիւնները զէպի այսօրնայիցէ բարի տրամադրութիւններ ունենան: Իսկ երբ այս տրամադրութիւնները պակսին անոնց քով, զօրութեան իւրեք աւելի կը մեծնան: Պատ-րիարքարանը խնդրոյն կարգադրութեան հար-կատար եղած ձեւակերպութիւնները ուսումնա-սիրելու գործը օրէնսգէտ մասնախմբի մը յանձ-նած է արդէն: Այս մասնախմբը տեղիկա-գիր մը պիտի ներկայացնէ խառն ժողովին: Կերեւայ թէ դեռ այդ տեղեկագիրը ճշդել կա-րելի չէ եղած: Այնչուս տեղեկագրեր մասնա-խմբը ի դիմաց պատրիարքարանին երկու կառավարութեանց Պոլսոյ ներկայացուցիչնե-րուն հետ բանակցութեան պէտք է մտնէ, և մասնաւորապէս Պուլկար Էքզարքի աջակցու-թիւնը խնդրէ, որուն բարեացակամութիւնը կանխածի տակ չէ, և մեզ կը յուսադրէ թէ Պուլկարահայոց Առաջնորդին համար գծուարութիւնները շուտով կը յարթուին: Բայց կը կարծենք թէ Ռուսմանիոյ համար խնդիրը կը տարբերի, քանի մը պատճառներով: Նախ թէ Ռուսմանի կառավարութիւնը իր հպատակ Հայոց Ուլա հարբին հետ ձուլուելու որոշ տրամադրութիւնները տեսած է, որմէ կուզէ օգտուիլ, մինչդեռ հայ Առաջնորդութիւնը մը հաստատելու այդ բանին արգելք կըլլայ: Երկ-րորդ թէ՛ Ռուսմանիոյ եկեղեցիները վարդապետական ստորինները մեծաւ մասամբ ի-րենց բնակավայրէն համեմատ վարդապետութեան ըլլալով չեն ուզեր Առաջնորդի մը հետ կողմնակցութեան տակ մտնել, ինչպէս որ երեք անգամ կաթողիկոսի հրամանաւ զրկուած վարդապետներու և եպիսկոպոս-առաջնորդի մը երկրին մէջ չընդունուելուն տեղի տուին: Այս մասին ծանր ամբաստանութեան տակ կը գտնու-

նուի դեռ Պուլկարի կեռեքրի թաղ. խոր-հուրդը: Երրորդ թէ Պուլկարի և արիւշ Ռուսմանի-կան մէկ քանի քաղաքներու հայ վարժարան-ները ուղղակի կառավարութեան կրթական ճեպարան իրաւասութեան տակ գրուած են, իսկ եկեղեցիներու հաշիւները թաղապետութեան կը ներկայացուին, հետեւաբար կառավարու-թիւնը հայ առաջնորդութիւնը մը հաստատե-լով իր ձեռք ձգած այս իրաւասութիւններէն դուրս թողնելու հրաժարի չպիտի ուզէ, եթէ հայ հաստատութիւնը երկրին սահմանադրու-թեան ուժին կրթներով եւ չի պահանջէ իր ան-բաւարարելի իրաւունքները: Վերջապէս Պատրիարքարանի այս ձեռնար-կութեան գիւրութիւնները բնծայելու առաջին պարտականութիւնը կը ծանոթանայ թէ Պուլ-կարիոյ եւ թէ Ռուսմանիոյ ազգայնաց վրայ: Երբ Պատրիարքարանը գործէն կաշխատի, ի-րենք ալ ներսէն մի քիչ շարժուել են: Խնդիրը իրենց ազգական վերելու մէջ կը կայանայ, կ'որոշեն սխալած չինքն ըլլալու եթէ ըսեք թէ այս երկու երկրներու և ոչ մէկ կողմէն 2—3 հայ չեն ելած ու հարցուցած Պատրիարքա-րանի թէ գործին գիւրութիւնը բնծայելու հա-մար մենք ի՞նչ պէտք է ընենք, կամ թէ կա-րելաւ տեղեկութիւններ հաղորդելով, չեն լու-սաբանած սեղանին վրայ եղող խնդրոյն այս կամ այն մակը կողմը: Ահա այսօր մեր Սօֆիայի թղթակիցը ցաւ ի սիրտ կիմացնէ թէ պուլկար կառավա-րութիւնը թաղ. խորհրդոյ ընտրութիւնը ըստ պուլկարական օրինի ընել տալ կուզէ: Այս ուշադրութեան արժանի պարագայ մըն է, ո-րուն համար Պուլկարահայոց պէտք չէ անտար-բեր մնան: Եւ որ կուզայ չեղտել պէտքը հոգեւոր իւղօր պետի մը, առաջնորդի մը, որ ցոյց տալ կառավարութեան թէ հայ. Եկեղե-ցին աշխարհի բոլոր մասերուն մէջ անկախ ճանչցուած և իր ներքին ու արտաքին ինքն-գիւրութեանը գարեհրու ընթացքին մէջ յար-գուած է ամէն տեղ ու ամէն պիտութեան տակ ուր որ հայ մատուռ մը գոյութիւն ունի, ցած է կամ ունի: Հայ առաջնորդի մը պէտքը անհրաժեշտ է մեր կրթական գործերը կազմակերպելու հա-մար: Հայ առաջնորդի մը պէտքը անհրաժեշտ է մեր եկեղեցիներու մատակարարութիւնը կա-նոնաւարելու համար: Հայ առաջնորդի մը պէտքը անհրաժեշտ է քահանայի և թաղականի անկողնաւորի խըն-դիրներէն ազատելու համար: Հայ առաջնորդի մը պէտքը անհրաժեշտ է

հայ ազգը ըստ աշխարհի կառավարութեան ներկայացնելու համար: Վերջապէս առաջնորդի մը պէտքը անհրա-ժեշտ է Պուլկարահայ աւերակ գաղթականու-թիւնը կազմակերպելու մարմնի մը վերածելու և անոր ամէն գործերը մեքենական կարգա-ւարութեան տակ ղեկելու համար: Ուստի պէտք է ուժ տալ Պատրիարքա-րանի ձեռնարկին: Գոռնպէր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄՍՏԱՒՈՐ ԹՂԹԱԿՆԵՐ)

ՍՕՅԻԱ, 16 Յուլիս

Քաղաքական կամ կառավարական նշանակելի-բան մը չկայ, որ գրէի. չեմ ուզեր յոգնիլ կրկնակցելով ալ, քանի որ հիմնական բաներ չեն, սակայն այսօր կուզեմ զբաղիլ խնդրով մը որ ազ-գային է եւ որ իր անցեալն ունի ու ապագայն ալ պիտի ունենայ: Կառավարութիւնը կուզէ այսօր, որ մեր թա-ղականի ընտրութիւնն ալ պուլկար օրինօք ըլլայ, քուէ տայ ամէն հայ, բայց ըստ իր միայն պուլ-կարահայտակ հայը, ինչպէս կընէ Հրէից եւ Տաճ-կաց համար: Եւստ լաւ կը յիշեմ, որ ի սկզբան Պուլկարիոյ ազատագրութեան, կառավարութիւնը բնաւ չէր խառնուեր մեր ազգային ներքին գործոց, մենք կընտրէինք ըստ սահմանադրութեան թաղական մը, որ իր ծոցէն կամ դուրսէն կամ խառն դպրոցական հոգաբարձութիւն մը կրնարէր իր պատասխանա-տուութեան ներքեւ եւ այս հոգաբարձութիւնը կը մատակարարէր դպրոցական գործեր, կը կարգէր պաշտօնեայ և կը հրաժարեցնէր, զո՞վ, ե՞րբ եւ ի՞նչպէս ուզէր, այնպէս որ դպրոցական տարե-շրջանը մը չունէինք եւ կազանդէ կազանդ հաշուելով տարին երեքմէ կը պատահէր որ միեւնոյն տար-ուան մէջ երկու երեք անգամ պաշտօնէից փոփո-խութիւն տեղի կուենար, զի ազգային ու Էֆէն-տիններ այսպէս կը հաճէին, չկար ոչ կարգ ոչ օ-րէնք, առաջնորդ չունէինք, Պատրիարքարանն ալ հետի, ալ զորս զու պատուիրեցէր, պաշտօնեայ մը այս կամ այն ազգային կամ էֆէնտինի թէլին ղապաւ, իսկոյն պաշտօնեան կըլլար, որ իր բազ-մակողմանի գէշ հետեւանքներով վերջապէս ժողո-վուրդը արթնցուց, պաշտօնէից աչքն ալ բացաւ, հոգաբարձութիւնը իրենք իսկ իրենց մէջ կուսակցու-թեան կը բաժնուէին պաշտօնեան պաշտօնէին նկատմամբ, թաղականն ալ չկրնարիւր անհամա-ձայնութեան մէջ տեղը գտնել գործերը ըստ ինքեան պուլկար դպրոցական տեսչին ձեռքը ձգեցինք, ազ-գային շրջանին մէջ դժգոս կողմը կամ իրաւունքը բռնաբարուած վարժապետը, հոգաբարձութիւնը կամ ժողովուրդը տեսչին կը դիմէր, որուն գլխին ցաւը օրէ օր շատնալով վերջապէս տեղի տուինք, որ կեդրոնական կառավարութիւնը տեսչին ներքին ըն-դունած սեղեկագիրներուն յանդիման եւ այսօրնային-լով իր տիրապետական ձգտումներուն ալ ժխտովի դպրոցական օրէնքը հրատարակեց, որ կը տրա-

մաղբէր ոչ միայն օտար զգորոցներով
հոգաբարձուները ընտրել ըստ որոշ-
եալ օրինաց . այլ եւ զգորոցական-
ներքին կարգ ու կանոնն ալ , դասա-
խօսութիւնք եւ ուսումնք , ամէն ինչ
ըստ պուլկար օրինաց ընել :

ժողովրդոց իրարանցումին, մասնաւանդ եւրոպահայաստակ հասարակութեանց կառավարութեանց միջոցաւ մտածեան վրայ դպրոցական ծրագիրը մէկ կողմ դրուեցաւ, առկայ հոգաբարձութեանց ըստ պուլկար օրինակը ընտրութեան վրայ կառավարութեանը պնդեց եւ ցարդ մեր պարզապէս հոգաբարձութեան կընտրութեան ո՛չ թէ մեր այլ պուլկար օրինակ, այսպէս ունեցանք թաղականէն ա՛յլատ ուրոյն մարմին մը, ընտրուած ժողովուրդէն եւ վաւերացուած կառավարութեանէն թէ ի՞նչ շահեցաւ կառավարութիւնը, չեմ ուզեր զրկել, սակայն չխորհինք թէ մերք ի՞նչ կորսնցուցինք—պէտք է խորհինք, այո՛, պէտք է խորհինք, այլ ո՞ր մեր այդ խորհողներ... Պատրիարքաբարնէն սկսեալ մինչեւ ցլետին հայը հարիւրաւոր եւ հազարաւոր հայոց մէջէն քանինե՞ք խորհեցան պէտք եղածին պէս. օրէնքը հրատարակուած միջոցներում էր միայն, որ Պոլսոյ թերթեր, թէ շատ գրեցին, սակայն միայն գրուեցան ու կարդացուեցան, ազգային իրաւասութիւն մը կորսնցուցինք անդառնալի կերպիւ, եւ զոնք իրաց վիճակէն մի քիչ օգտի՛լ ազգայնայինք, այն ալ չունեցանք. կոչ կորդիւտի արցունքներ թափեցինք, ու սեղերնիս նստանք. որովհետեւ մենք մեր ձեռքով ըրինք առանց հեռուստատեթեան:

Այնուհետեւ ձեռքբերինս միաց միայն
թաղականի մը ընտրութիւնն ըստ
Ազգ. Սահմանադրութեան. զժողով
գաբար այս մէկ հատիկ իրաւունքն այս
թորսնցնելու վրայ ենք. կոտավա-
րութիւնը կողքէ, որ ընտրութեալ
միայն պուլկարահպտութիւնի ըլլան.
պիտի ընդունուի՞ այս հրաման թէ ոչ.
ո՞րն է լաւը, ընդունի՞ յիշ մեր-
ժեւ... Երկար պիտի լինէր, եթէ ա-
ստնց ամէնուն վրայ մէկիկ
գրէր, սակայն պարտ կը համարուի
գրել թէ ինչէն յառաջ եկած է կա-
ռավարական այս միջամտութիւն:

Պուկարաբանակ բոլոր հայերս ալ
գիտէինք, որ վերջին գաղթականութեան
ի վեր տեղական ազգային
գործեր աւելի խառնաշփոթ վիճակ
մը ունին. արգէն քիչ թէ շատ ամէն
տեղ ալ կուտակեցական ոգին կը տի-
րէր, գաղթականք ալ իրենց հետ
բերած անձնական կիրքեր խառնելով
տեղականներուն հետ, շատ տեղեր
կիրքեր իրենց գաղթածակէտին հա-
սան. քիչ թէ շատ չէ՝ թէ ազգային
այլ անձնական պատուոյ զգացում ու-
նեցող մարդը նողկանօք պիտի յայ-
կամ պիտի կարողայ մանաւանդ Պուր-
կազի, Ֆիլիպէի եւ անցեալ տարի ալ
քաղաքիս ազգայնոց մէջ ծագած ու-
տերած սին ու զժողով կիրքերէ յատու-
եցած տակնուվրայութեանց նկատ-
մամբ կառավարութեան ձեռքը զըռ-
նուած կուսակցական բողոքներն ու
տեղեկագիրները :

ՍՕՖԻԱ, 12 Յունիս

Այս տարուան օգէն է թէ ինչէն է, գրեթէ բոլոր գործերը տարակարգ ընթացք մը ունին:

Սօպրանոն էին սկսանք. ազա-
տական նախարարու թիւնը դատի
են թարկելու անպուշ կերք մը ու-
նեցանք. որպէս թէ խնայողու-

Թիւին պիտի ընենք, այս ու այն պաշտօնեայն վռնտուեցաւ, պաշտօնէութիւններ չնլուեցան, քաղաքական այցելութիւն վայելեցինք, ռուս կառավարական դրամատունը մեզ փոխ տուաւ 8 միլիոն ֆր. թէ եւ մեզ բան մը չըլտնցնեց, ուղղակի վճարեց մեր յուլիսի գումրոնները, —ի՞նչ վրաս տա՞նք թիւն է այս, միթէ՞ պիտի ուտէինք այդ ստակը թէ դիւրութիւն համար այդպէս եղաւ ան, փոխառութեան պորժը տակաւին կ'օրօրի և կ'երեւի թէ Կարապէտ լօյլն ալ պիտի ձրթայ ի փարիզ յօգնութիւն Սարաֆօվին, համոզուելու համար եւրոպացի զբամատէրները որպէս զի մեզ ստուկ տան ու չը վախճան թէ պիտի կորսուի իրենց ստակը: Սթոլլովի և Դովանչօվի օրեւջն ալ ռւնեցանք փոխառութեան խնդիր, ու դարձեալ մասնաւոր մարդիկ զրկուեցան ի կտրգադրութիւն գործին, ստկայն օրի՞ն օրով այսչափ երկարեցաւ բանակցութեան խնդիրը:

Մակեդոնական զօմիւնի զոր-
ծօն անդամոց ձեւաբանութիւնը, ինչ-
պէս և ցարդ անոնց արդարաց-
ման և կամ յանցապարտութեան
զերարեւորութեամբ ձեռք առնուած
միջոցները, նոյնպէս և անոնց պա-
տասխանն ալ արտաքոյ կարգի
պիտի ըլլայ:

Վերջապէս որոշուած է, թէ ամսոյս 30-ին երդուեալներու արտակարգ ժողով մը տեղի պիտի ունենայ. երեք օր պիտի տեւէ այս երեք աւուրց մէջ Ստորագով և իւր ընկերք պիտի դատուին հրապտարհաւ թէ յանցաւոր են թէ ոչ և թէ ի՞նչ աստիճան. երկրին լաւագոյն փաստաբան երէն շատեր առանց կուսակցական կրից ինքնին ստանձնած կերեւելին այս դատին պաշտպանութիւնը. ըսուեցաւ, որ մինչեւ 120 փաստաբաններ իրենց պաշտպանութիւն առաջարկած են. սակայն ինչպէս յայտնի է, այդ անկարելի էր. զի չէ թէ երեք օր իմերեւս երեք ամիսն ալ քիչ գար եթէ ամեն մէկը միջին հաշուով մէկ մէկ ժամ խօսէին:

Բանտարկեալք 14 փոստարանի
անուն միայն տուած են իրենց
խնդրագրին մէջ և այս ալ գործ.
եայ միծ բան է :

Աւսպէս խնդիրը որ ինքնին հե-
տաքրքրական է . սկիզբն ի վըր
արտակարգ երեւոյթ մը ունի,
պիտի վերջանա՞ւ և թէ ինչպէս :
Մի քիչ համբերութիւն եւս և
ահա ամեն բան պիտի որոշուի ,
պիտի պարզուի ու հասկցուի :

Թրնովայի միաստօրիտ, Գլէ-
մէնտ եպիսկոպոսին ժահն ալ բը-
նական չէր. ոսին կրօնականը, որ
պուլկար օրթոտօքս եկեղեցւոյ նը-
շտաւորագոյններէն էր, միակ
ինք գոնուեցաւ, որ Սթանպու-
լօքի տպօրինութիւնները մինչեւ
իսկ եկեղեցւոյ բնմէն տրհամար.

հիշու համարձակութիւնն ու արեւ-
ութիւնը ունեցաւ և որ իրեն հե-
տեւողներ ունեցաւ կամաց կամաց
թէ կրօնականաց և թէ աշխար-
հականաց մէջ որք անոր անկուսը
վերթացուցին վերջ ի վերջոյ, դրժ-
բաղտաբար կաշկոկապուը իւր քա-
ղաքական հակառակորդին սար-
քած միջնցնիրով դառուեցաւ, բան-
տարկուեցաւ, ուր բանտին խոնտ-
ւութենէն հիւանդացաւ ու ալ չը
կրցաւ բոլորովին կազգուրի
մշտ քամի (ռոյժ թիզմ), որ ի
վերջոյ անգամաւոր ծեց անոր մարմ-
նոյն ալ և ալ մասերը և այսպէս
վերջ ի վերջոյ 60 տարեկան հա-
տակին մէջ իւր բեղմնաւոր կեանք
վրայ տուաւ :

ինչպես հեռագրով ալ հաղոր-
դած էի, սոյն եպիսկոպոս շատ մը
պաշտօններու հասաւ, շատ օգ-
տակար ծառայութիւններ մատուց-
ելովական և ներքին քաղաքական
տնտեսկետով, մասնաւորապէս պու-
կար եկեղեցին սակաւին շատ բան
կըսպասէր անկէ տրդի պարագա-
յից մէջ, երբ մեծամեծ խնդիր-
ներ կը գտնուին Սինօգին սեղա-
նին վրայ. սակայն հա կարծես
ցաւած իւր աշխարհական և կրօ-
նական հակառակորդներէն, որոնք
չուզեցին և չեն ուզեր ճշմար-
անօր անկեղծ սգին ու սիրտը ժը-
ղովուրդը բարօրացէս զարգացնե-
լու գործին մէջ, հեռացաւ երկ-
րէս իրեն հակառակորդաց թողլով
ստպարէզը: Հանգուցեալին զա-
գաղը երէկ առաւօտ մօտը եկեղե-
ցին փոխադրուեցաւ իտեա և ի
վերջին համբոյր հաւատացեալ
ժողովրդեան, ուր մնաց մինչեւ
Ժամ 6 1/2 հրեկոյան և ապա ի
Թրնովա տարուեցաւ մասնաւոր
չոգեկառքով, ուր պիտի կատար-
ուի թաղման կարգը և հոն պիտի
թաղուի:

Մայր հեղեղեցոյ մէջ ի ներկայ
յուժեան խուռն բազմութեան Սի-
նօգի բլրոր ներկայ անգամոց մաս-
նակցութեամբ պատարագ մա-
տուցուած միջոցին մեր Գեր. Ա.
ցեղուն, Բարձ. Ծ. Վ. Պաղծեան
վերար ի գլուխ պուկարաց հ.
հեղեցին մտաւ ու կեցաւ պատշա-
ճաւոր տեղը նախարարաց դիմացը
իշխանին գահին առջեւ, իրեն հետ
ունենալով իրաւունքի թղթակիցը,
քառորդի մը չափ կենալէ վերջ,
Գեր. Պաղծեան յառաջացաւ գէպ
ի գագաղը, գլուխը բաց լռելեայն
ազօթից մի քանի վարկեան, ա-
պա համբուրելով Ա. ետարանն ու
հանգուցելոյն ձեռքը գուրս ելաւ,
Ոստիկանաց և ոստիկանապե-
տին ցուցած համակրանքը ու յար-
գանքը այնչափ բազմութեան մէ-
ջէն տոցնելու համար, պատիւ կը
բերէ. թերեւս առաջին անգամն
էր, որ հայ կղեր մը իւր ազգային
կրօնական տարազով հրեւցաւ օ-
տարաց առջեւ, և եթէ չեմ սխա-
լիր, ապա համար ալ էր, որ մեծ
ու պատիւ խորին ուշադրութիւն

և հետաքրքրութիւն դարցուցած էին անոր վրայ, Հաճիս նախելով շատ ցոհ մնացած են Պուկկարքայս շարժումէն և քաղաքիս մետ. բափօխաբ ի վերջոյ իւր մասնաւոր գոհունակութիւնը յայտնած է :

ՊՈՒՐԿԱԶ, 13 Յուլիս

Իրաւունքի 7 Յունիս 48 թիւին մէջ
կարգացի Պոլկոյ զի թաղակառուիեան
հերքման զրուի իւնը, որուն չպիտի
պատասխանէի թէ եւս -- վասն զի երկու
տող խմբագրական ծանօթութիւնը ա-
մէն ինչ պարզած է արդէն, որուն
ճշդութիւնը կը հաստատուի -- բայց
ստորագրեցայ պատասխանել քանի մը
կէֆեռեան բացարձակ տարօրինակու
թիւանը պատճառաւ:

Ա. Իբր թէ Գեորգ վրդ. բնաւ փա-
փաք չունի եղեր հոս մնալու, եւ
միայն թաղ. խորհրդոյ հաւանութեան
համաձայն կը մնայ եղի: Արդեօք
ինքնադուռ ատենապետի եւ ատենա-
պարի հաւանութեան համաձայն ըսկի
կուգին:

Բ. Վարդապետը կը հովուէ եղբի եւ կեղեցիւն եւ ժողովուրդը ։ Ուրեմն ինչո՞ւ զուր տեղը քահանայն կը պահին եւ թոշակ կը վճարեն ։ Քանի որ յայտնի է թէ Պոլսկացի մէկ հեկեղեցականի մը իսկ դոմար տարրեցնելու վիճակին մէջ կը գործուէ ։

Գ. Հայր Սուրբին թէ՛ հայերէն եւ թէ՛ տաճկերէն քարոզները եղած են սէր ժողովուն եւ աշխ. : Տաճկերէն քարոզին իրիկովոր չէր որ Հոգաբարձու ինքան առեկապէն Տ. Գ. Բարդաւեանը գալով՝ ի ներկայութեան քանահայրին՝ վարդապետին այսպէս խօսեցաւ . «Հայր Սուրբ այսօրուան տաճկերէն քարոզովդ ժողովուրդին մօժեցողով պատճառներ ես . տեղացիք իւրար անցեր են թէ Ահ հիւսիք, պոռ վարդապետ պիտի լինիսագե իրսիսն» . — (Այս քա սուտ է :

Դ. Իրողութիւնն չէ՞ որ վարդապետը հկած օրէնն ի վեր, ամէն իրիկուն ի բքով կը կանչէ Շ. Խումբը - ասոր կենդանի վկայ՝ լուսարարը, Ո. Ք. հովիւը եւ աս ալը—եւ շողոքօթիւնը՞ զգանշնք, 15 օրօքէ ի վեր հանրապետի թիւն մը պատրաստուի կոտայի, քահանային տեղէն մեկնելուն հա իրեն (վարդապետին) հոս միաբաժնի համար. հակառակ ինքնակոչ երկու թաղականներու գրածին, վարդապետը հոս միաբաժնի համար փափաքէն աւելի փափաքէն ալ տալու պատրաստ է՝ Բայց աս անկարելի է:

Ե. Ամսոյս 9-ին, Ռոտտերդի օրը, յետ աւարտման հիւղեցեոյ, խորհրդաբանին մէջ տեղի ունեցեալ տրոտր դէպքը կամ տեսարանը, ի ներկայութեան լոգանալին, լուսարարին, ինքնաբերականութեան, Գր. Ռայստոտերդին եւ այլոց, ալսինքն վարդապետին անբաժանելի վարմունքը դէպի Տ. Միսաք Մարեան, ինչպէս նաեւ Տ. Պա. Ս. համեստունի տիկինն, ինչ ընդհանուրութեամբ կարելի է արարաբանել:

Գանք հերքումը ստորագրողներուն.
 Լեզեօ՞ք զարմանալի չի թուիլ ըն-
 թեկցողներուն ինքնակոչ տաննապար-
 Գէորգ Զամեանի ընթացքը. նա՞ որ
 երկու ամիսէ ի վեր Գարնապատ կը
 պտնուէր, եւ հազիւ 3—4 օրէ ի վեր
 սեղս դարձած է, բանէ մը տեղեկու-
 թիւն չունենալով, խեղճուկ եւ ողոր-
 մելի Մ. Մ. ի գործիք դարձած, կը
 մանարձակի ստորոտրիկ հերքումը եւ
 կույ՛է ճամարտութիւնը խախտել:

